

ՆԵՐՄԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է... Առանձին կամարները 5 կոպեկով...

Քիֆիսուս գրվում են միմյան խմբագրատան մեջ...

Մեր կառույցը. Тифлис, Редакция «Мешак»... Վաս. Tiflis, Rédaction «Mschak»... Տ է Լ Ե Ք Օ Ն № 258.

Խմբագրությունը բաց է առևտուրի 10-2 ժամ... (բացի կիրակի և ուրբաթ)...

Յայտարարությունը ընդունվում է ամեն լիցուով...

Յայտարարությունների համար վճարում են... իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ... Տ է Լ Ե Ք Օ Ն № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻ

Կիրակի, օգոստոսի 10-ին, Վանքի առաջ եկեղեցում, պատարագից յետոյ, օրվայ ժամը 12-ին կատարվելու է հանդիսաւոր հոգեհանգիստ ի տէր հանգուցեալ յաւերժա- յիշատակ

Տ. Տ. ՄԵԼՔԻՍԵՆԻԿ ՍՐԲԱՉԱՆԻ

համար, որի մասին այսու ծանուցանում է ի գիտութիւն հայ հասարակութեան Քիֆիսուսի հայ հոգևորականութիւնը:

ՔՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Վարդաբ հոգ տարէք.—Ներքին ՏԵՍՈՒ- ԹԻՒՆ. ՈՎ է մեղաւորը. ներքին լուրեր.— ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ի՞նչ է կատարվում Մակեդոնիայում. նամակ Ամերիկայից. Արտա- քին լուրեր.— ՀՆՈՒՊԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ- ԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.— Հայկական նկար- չութիւն:

ՎԱՂՐՈՐԹ ՀՈՒ ՏԱՐԷՐ

Այս տարի հացի բերքը մեր երկրի շատ տեղերում եղել է բաւարար, իսկ մի քա- նի շրջաններում նոյն իսկ բացառիկ կեր- պով առատ: Ընդհ է, կարկուտը շատ գիւղերի վնասեց և այս տարվայ կարկու- տը մեծ աւերումներ էր առաջացնում, այնուամենայնիւ ընդհանուր բերքը երկրի մեջ լաւ է և հացի գինը չէ բարձրացել: Անցեալ տարի էլ բերքը վատ չէր և գիւղացիների մի նշանաւոր մասը, որ վնասված էր նախորդ անբերրի տարիներ- ընց, կարողացաւ կազդուրել իր անտեսու- թիւնը և վճարել իր վերջնական պարտե- թի մեծագոյն մասը: Ներկայ տարվայ ա- ջող հունձը կը նպաստէ գիւղացու կեան- ջի անհրաժեշտ կարիքների հոգացման աւելի մեծ չափով, քան նախորդ տարի- ներում, երբ մարդիկ կարօտ էին մնացել նոյն իսկ օրեկան հացի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ (Վերջ)

Յարգելի ընթերցողս, ճար չեղաւ աւելի հա- մառօտ խօսելու ցուցունելու համար պատկերը այն քաղաքակիրթ քրիստոնէայ ընկերութեան, որուն գեղարուեստական դպրոցին աչակերտել են մեր միջին դարու ազգային պայքեր և որին ամենահաւատարմ, ամենաջերմ սիրով, առանց ո և է վերապահութեան, չլու հետեղ- ներ են եղել և մշակել մի և նոյն սկզբունք- ները, հաւատքով նոյն և ընկերական բարոյա- կան մի և նոյն հիմունքի վրա դրուած մեր ազգին մէջ Ուստի և իմա այս մի և նոյնը իբր թէ հայերի մասին ասած լինէի: Փաստեր, ա- պացոյցներ, շատ կան:

Մեր ընտրուած աշխարհում նկարչութեան ամենահին նմոյշներ մեր հին վանքերումն են, լինան գրչագիրներու մէջ, լինան եկեղեցիների պատերի վրա մանաւանդ: Ենթադրելով ամե- նահաւատան է հայ ամենահին և հազուադէպ գրչագիրների հաւաքածոյով, երկրորդ տեղը կարծենք Երուսաղէմինն է, երրորդը Վենետիկոյ Մխիթարեանց վանքն է, ուր 1500 գրչագիր- ներ կան հաւաքուած և վերին աստիճան ինամ- ըով պահուած, էլ չենք ռսում վատիկանու, Պարիզի Ազգային մասնադպրոցի և առհասա- րակ Եւրոպայի զանազան մեծ թէ մասնաւոր թէ ազգային կամ թագաւորական գրադարան- ների մէջ գտնուածները: Ամենազեղեցիկ (հա- մենաբարձր) նկարազարդութիւն ունեցող գրչագիրները Ենթադրում տեսածներս են: Բայց ընտ չեմ մտածարար նաև այն անտաշիւտ գրչագիրները, որոնց ցոյց առոււ ինձ վերա- պատուեալ Կ. Ղ. Մ. Ալիշանը, 1) և որոնց ա-

Սակայն պէտք է չը մտանալ այն տա- րիները, երբ առատ հունձ չէր լինում և այժմեանից միջոցներ ձեռք առնել սև օ- ռերի մասին հոգ անելու: Անցեալ տարի մեր յորդոր կարգացինք մեր գիւղացիներ- ընց, որ նրանք օգտվին առատ բերքից և հացի շտեմարաններ հիմնեն գիւղերում: Մեր գաւառական թղթակիցներն էլ ի- րանց կողմից նոյն հարցը դրին գիւղացի- ների առաջ: Եւ մենք տեղեկութիւններ ունենք, որ առանձին անհատներ գիւղե- րում աշխատել են իրանց համար պաշար- ներ ամբարել: Բայց համայնական հասա- րակական շտեմարաններ չեն հիմնվել:

Մենք անհրաժեշտ ենք համարում նո- ընց յարուցանել այդ հարցը և մեր գիւ- ղացիներին յորդոր կարգել, որ ինքնամո- ռացութեան չը մասնին իրանց և հէնց այժմ, երբ նրանք ապահովված են և ա- զատ են ծախարիւղ կարօտութեան կրա- կիծներէրց, այժմ իսկ հոգ տանեն շտեմա- րաններ հիմնելու և նրանց միջոցով մեղ- մացները կարելի էր օյժը այն տարիներում, երբ բերքը պակաս է:

Գիւղացիները կարող են հացի փոխա- րէն և գումարներ ժողովել, այսինքն ա- ռանձին տներից հաւաքած հացահատիկ- ները փողի վերածել և այդ գումարը յե- տոյ բաժանել գիւղացիներին անբերրի տարիներում հաց գնելու համար: Սակայն

մեծահին թուականը Գրիգորոսի 900 թուա- կանէն առաջ չէր լինել:

Գալով եկեղեցիների պատերի վրա «ա Յոսիկո» նկարուած պատկերներու, դրանք միանգամայն այն տիպ ու տարաքի է այն տեսակի և բնու- թեան կազմածքով պատկերներ են, ինչ որ գրչա- գիրներում կը պատահեն, տարբերութեան մը մը, որ այն անգամ անհամեմատ մեծ (երբեմն քառ- կան հասակաչափի մեծութենէն էլ մեծ) պատ- կերներ են և դրանց շինողները անշուշտ շատ աւելի բարձր են կանգնած եղել իբրև տէխնիկ,

ներ ունեցել են, 1688-ին ամառը, երբ աստիճան զնացել էի Վենետիկ, ս. Ղազարու վանքը, ցոյց տաւա ինձ փոքրիկ հաւաքածոյ մը ընդօրինակուած ծաղկազարդերու և վերջի ու զիւսգիւր պատկերնե- րու, խնդրեց ինձմէ ընդօրինակել իբրև այդ հաւաքա- ծոյին համար իսկ մը ուրիշները, որոնց նա ընտրել էր զանազան և շնորհակալ էի 1500 գրչագիրների մէջից: Սե՛ծ ուրախութեամբ դիմ ինձիցիւր պատկերի վարդա- պետին տրամադրութեան տակ և երկու ամիս շարու- նակ գնալով ս. Ղազար ընդօրինակեցի աւելի քան 50—60 կտոր օճաւանդների և ծաղկազարդեր, ճիշդ այն գոյներով և ոտկեայ յատակներով, ինչպէս որ կան գրչագիրներուն մէջ: Հայր Ալիշանը ի հարկէ մտադիր էր կամ գտնէ կը ցանկար հրատարակել այդ զուտ գե- յարուեստական գործը, բայց ինձ ասաւ «որ գնած գտնեմ մի գիժ լարեալ, որ 50,000 ֆրանկի նոտիք առաջուց...»: Վանքը չէր կարող այդպէս զուտ գեղար- ուեստական գործի համար տրամադրել այդքան փող: Արդեօք ի՞նչ արաւ լեռոյ չեմ գիտեր:

Այլ մի և նոյն տարուց ձմեռը, Հոսում, Վատի- կանի գրադարանի մէջ, «Ատիկ կայտեր ծախմա- տըք»-ը կրուած հիւանդի պատկերազարդ գրչագրէ մը (X-րդ դարու գործ) ընդօրինակած են նաև այն եր- կու ոտիկ յատակով պատկերները, որոնք զարդարում են հայր Ալիշանի «Այլարատ»-ը և որոնց նիւթերն են «ս. Գ. Լուսարդի» և «Հովիտիմանց նահատակութիւն»:

Այլարատ» երես 237 և 440. Գարձալ իմ ընդօրինակածներն են «Այլարատի» երես 236 մի ուրիշ ս. կողմ Հովիտիմանց, որի բնագիրը նկարուած է 1356-ին «կարմիր և կապուտ երանգօք», մանկազոյն և վաղըջարդի կերպարանէ զիտան»:

«Այլարատի» երես... ձառնէ շրջափակի մէջ «ձաղ- կարար Սահակ եպիսկոպոս» պատկերը ձն. 1788 լիւն- 1857:

դա մի այնպիսի հանգամանք է, որի նը- պատակայարմարութեան մասին պէտք է վճիռ կայացնել ինքն գիւղական հասարա- կութիւնը: Փող ժողովելը այն յարմարու- թիւնը ունի, որ գիւղացիները ազատվում են շտեմարան շինելու և հացը մկների ու միջատների արշաւանքից զերծ պահե- լու, սակայն միւս կողմից յայտնի է, որ գիւղական փողերն էլ շատ անգամ այս և այն մարդու ձեռքում շատ շուտ հայվում են և փչանում:

Իւրաքանչիւր տեղի գիւղական հա- մայնք ինքը կարող է վճիռել իր համար, թէ ո՞ր եղանակը աւելի նպատակայարմար է իրանց տեղում և նրա համապատաս- խան գործել: Բայց չը պէտք է յետաձգել գործը: Ի՞նչը ինքներդ ձեզ պէտք է օգ- նէք, այլապէս դուք ինքներդ կը տուժէք ձեր ընտանիքով, ձեր ամբողջ անտեսու- թեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՎ է ՄԵՆԱԿՈՐԸ

Այս փոքրիկ պատմութիւնը, որ պէտք է գը- րեմ, բացառիկ գէպը չէ գիւղական կեանքում, բայց ոճանք ճակատաբանական վճիռ համարե- լով, ոճանք էլ ճշմարտութիւն ու ամօթից խեղդ- ված լուս ու մունջ կրում են իրանց ցաւը: Սակայն համբերութեան էլ օսածան կայ, որից յետոյ մարդիկ այլ և չեն կարողանում տանել և բաց են անում իրանց արեւնոտ սրտի ծալ- ջերը մի գեղ ու ճար գանջու լուսով: Ահա այդ գեղ ու ճար փնտռողներից մէկին ես հան- դիպեցի:

Ես իմ փոքրիկ շան հետ զբօսանքից տուն վերադառնալիս հանդիպեցի մի գիւղացու, որը բազմապարզոր աշխատանքից յետոյ՝ աղբիւրի եզերքին նստած՝ իր ունեցած գարու հացը թրջել ուտում էր: Բարեկրօք նրան, ես էլ թեք

քան գրչագիրների խաղաղութիւն վրա կարճա- տեւութեան մասնուած միւս նկարչիչները:

Այս տեսակի նկարչութեան ամենահինների նմոյշներ տեսայ Անիի օ. Գրիգոր Լուսաւորչի կիրաքանդ պատերի վրա օստակի մաշուած և աւերուած գրութեան մէջ: Ապա Տրապիզոնի մօտ Չարաբան սուրբ Փրկչի վանքի երբեակ եկեղեցիներից մեծագոյնին՝ ս. Ստեփանոսի մէջ 2) պատերի վրան կարգաւ շարուած, սուր- բերու, մարտիրոսներու, ճգնաւորներու վերին աստիճանի շանկան և հետաքրքիր պատկեր- ները (քանակաւք անհամեմատ մեծ չափերով): Այս հնութիւնները եթէ մինչև այսօր համարեա աւնեղծ մնացել են, շնորհիւ այն հանգամանքի է, որ տաճարին ներքին կողմը և մարդկային ձեռ- քերի հասողութիւնից շատ բարձր նկարուած են: Ծանապարհորդներ կը հաւատան թէ հայ- կական այդ տեսակի հնութիւնների զեռ ևս մնում են Աղթնաբանում ս. Կարապետ, ս. Յով- հաննէս և այլ մեծ վանքերում 3) Գալով տե- ղափախուող (peinture de chevalet) նկարների, դրանք համեմատաբար աւելի նոր են—գոնէ հայերին մօտ գտնուածները:

Իմ տեսածներից ամենահինը, մի անտաղիւտ, զուտ բիւզանդական ոճով նկարուած Աստուա- ծածնի պատկեր էր Տրապիզոնի օ. Օղսէնտ եկեղեցւոյ մայր խորանի պատկերը իր անբա- ժան Յիսուս մանուկը գրկում: Խորին ցաւով

2) Այս վանքի շինութեան ստույգ պատմութիւնը չեմ գիտցած դեռ. Բօսն Ստեփան Եճմէտոնի անուն պարսկապատկերից զազթած մեծահարուստ հայ մը կա- պտանել տուել է, սակայն իր անձնական ծախքով (ոմանք էլ կրեն թէ տեղի ուսանող շինուածը կար է Բօսն Ստեփանը իրենից ծախու առել է): Այս վերջին ասացուածը ինձ անհասանկան կերելի:

3) Շատ կը խնդրէի յարգելի ազգակիցներիցս եթէ գիտեն, տեսել են կամ իմացել, թէ Հայաստանի ո՞ր տեղում կան այդ տեսակի հնութիւններ, բարեհաճէին ինձ իմացնել պատասխան «Մշակի» խմբագրութեան միջոցով: Ինչպէս նաև եթէ հարկ էր, նկարների նիւ- թերի անունները, թուականները, տեսակը, և նկարու- ղի անուն, սարքի և կենսազգական տեղեկութիւններ:

ընկայ կանաչի վրա հանգստանալու: համար Շուշու երբ մօտեցաւ գիւղացուն, վերջինս մի կտոր իր հացից զցեց նրան, բայց չուճը հոտո- տեց ու չը կերաւ հացը: Գիւղացին խիստ ըզ- գացված կերպով գլուխը շարժելով՝ նայեց դէ- պի երկինքը և ինքն իրան մրմնջաց:

—Աստուած ջան, դու այնպիսի բաժին ես տուել ինձ, որ չունի էլ չէ ուտում...

Նա մի բօպէ գլխակոր ու լուս մնալուց յե- տոյ աւելացրեց:

—Մեղայի Բեզ Աստուած, մեղայ, երկի ես մեղաւոր եմ:

Եւ արտասուքի կաթիլներ դուրս թափվե- ցան նրա աչքերից: Ի՞նչ համար շատ տարօրի- նակ բան թուաց գիւղացու այդ խոր զգաց- մունքը... որովհետեւ ես շատ լաւ ծանօթ էի գիւղացիների կեանքին, նրանցից շատերը այդ միեւնոյն դառն բաժինն ունեն, բայց երբէք չէի լսել նրանցից այդ տարիճան բողբ ու տրտունջը... Հետեւաբար, աւելի հաւանական ե- րևաց, որ նրա սրտում մի այլ՝ աւելի ծանր ցաւ կար թաքնված, ուստի սկսեցի հետաքը- րվել...

—Չէ, վարժապետ ջան, չէ, աղքատութիւնն ինչ բան է որ... այդ բոլորը մեր բաժինն է, մենք պէտք է լուս ու մունջ տանենք: Անցեալ օրը մեր աէրաէրն էլ եկեղեցում քարոզ խօսե- լիս ասաց, որ Աստուած հարուստին հարուստ է ստեղծել, աղքատին՝ աղքատ, աղքատներս պէտք է գարի հաց ուտենք, աչխանք, որ հարուստները լաւ ապրեն... Այդպէս է ի վր- րուստ մեզ վիճակել ճակատաբար... Մենք կը տանենք մեր օս ճակատագրի հարուստները... Ծօ գարի հացի փոխարէն ճաթ (կորեկի հաց) կուտեմ, բայց իմ դարդս արեւնոտ դարդ է, քայելու դարդ չէ, մի քրքրելի:

Գիւղացին իր խորհրդաւոր խօսքերով ևս ա- ռուել գրգռեց իմ հետաքրքրութիւնը, ուստի աւելի ու աւելի թախանձեցի, որ նա բաց անէ իր սրտի ծալքերը, մինչև անգամ խոստացայ նրա սրտի գարդը լոյս աշխարհ հանել «Մշակ»

խմացայ որ երբ տարի առաջ լուսարարի թէ դպրի կամ սարկաւազի մը անգղաւորու- թեամբ վառած մոմ մը ընկնելով սեղանի փողջների վրա, հրդեհ պատահել և անդին պատկերը այրուել է...

Պատկաների հնութիւն մը կը նկատուի Ալեք- սանդրապոլի եկեղեցւոյ մէջ գտնուող «Ծօթն վիրաց պատկերը», որուն համար կը պատմուի թէ Գրիգոր մագիստրոս Պաշլաւու- նեաց իշխանը նկարել տուել և ուղարկել է Կօստանդնուպօլից (1000—1030 թ. 4): Այս պատկերը շատ մը պատահանքներից անցել է, որոնցից վերջին 100 տարուաները ծանօթ են: 19-րդ դարու սկզբում այդ պատկերը գտնվում էր Հասան Ղալիի «Կարմիր Վանք»-ի եկեղե- ցում, որը ժամանակին ձէնէթեան Գրիգոր վարդապետ մը բերել է Հատիճու վանք և որը ապա յետ է պահանջում Կարմիր տառնորդ Կարապետ եպիսկոպոսը (1820—30-ին): Ապա առու-թիւրքական պատերազմի հետևանք կրմա Պատկերիչի հետ գաղթող հայերը բերել են Ալեքսանդրապոլ և մինչև այսօր մեծ երկիւղա- ծութեամբ կը պահեն ու կը պաշտեն հասա- րակաց աղէտքի օրերուն, երայտութեան, հա- մաճարակի, պատերազմի ժամանակ, քահանայ- ներով, խաչվածներով դպրաց դասերով հան- դիսաւոր թափօր կազմած դուրս կը հանեն և կը պտոցեն, երբեքով պարագային յարմար շարականներ և այլ հսկումի աղօթքներ 5):

Ժամանակաբարկան կարգով և տէխնիկայի տեսակովը տարբեր ամենահին նկարների պա- տերի վրա դա օ. Էնթիմաճում մինչև ներկայ

4) Կրկնում են խնդրել, որ որ ո՞ր որ գիտէ ու- լիչ նոյնատեսակ հնութիւնների մասին, երախտա- պարտ կը լինեմ: Նմանապէս հաճութեամբ կը որբա- գրէի այս տուած տեղեկութիւններս սխալները, եթէ դրանք գտնուին և ինձ ցուցուին:

5) Վեհապար քանի մը կտոր այդ քանդուած նկա- րին ձեկերից պահել տուել է մայր տաճարի դանձա- լանում, որոնց, 1901-ի ամառը Ենթաճում եղած ժամանակը, ցոյց տուին ինձ:

1) Հայր Ղանդ Քլիշանը, որին հետ սրակցութիւն-

լրագրի միջոցով Գիւղացին, մշակների քրտինք սրբող, նրանց ցաւերին դեղ ու ճար անող Մշակի անունը լսելու պէս՝ մի ծանր հոգոց հանելով՝ սկսեց պատմել։

— Ես դեռ 17 տարեկան մի միամիտ ու անմեղ պատանի էի. դեռ ոչ մի ցանկութիւն չէի գտնում իմ մէջ ամուսնութեան, երբ հայրս—գեօքանդեօս եղնի նա—մի ինչ որ ներքին նպատակով ինձ բռնութեամբ ամուսնացրեց։ Երբ տարի անցաւ իմ ամուսնութեան օրէց... Բայց կինս երեխայ չը բերեց, ուստի կասկած ծագեց հօրս մէջ, թէ կինս անբնական է մայրութեան և վաճառեց նրան մեր տանից։ Ես մինչև անգամ մի տեսակ թեթևութիւն զգացի և ուրախացայ այդ բանի համար։ «Թափաբ» ասած բանը չէի հասկանում...

Նա մի բայէ կանգ առաւ, ծխախոտի ծուխը անյայտ կերպով կուլ առեց ու կրկին շարունակեց։

— Կինս ինձանից բաժանվելով՝ կենակեց մի ուրիշի հետ... և երեք տարուց յետոյ մի երեխայ ունեցաւ Հայրս, զգալով իր օխարմենաբանը՝ սկսեց ինչորոշ տալ թէ հոգևոր և թէ մարմնաւոր իշխանութեան... և վերջ ի վերջոյ հինգերորդ տարուս մենք նորից միացանք... Այն, անիծվել այն օրը... Կինս արդէն բոլորովին ընկած կին էր... Մի և նոյն տարուս հայրս մեռաւ՝ ինձ թողնելով մենակ ու արգաստ վիճակի մէջ։ Նա իր կենդանութեան ժամանակ մեր բոլոր ունեցածը վատնել էր, այնպէս որ մի բուռ հող անգամ չը կար ինձ համար գրելու։ Ես ստիպված եղայ որսահորս ամբողջապէս անել, արինք-բորինք թափել, կընոջս պահանջներին բաւարարութիւն տալ, որպէս զի նրա աչքը ուրիշի գրանդ չը մնայ։ Բայց ի՞նչու... կինս այլ ևս չուղղվեց... և մեր ընտանեկան կեանքը կատարեալ դժոխք դարձաւ։

— Ի՞նչ անեցի ես, հարցրեց նա—ծուխը կուլ տալով և ձայնի տոնը փոխելով—երբ տունը թողնում է, գլուխը դնելու տեղ չես գտնում, ստիպված ես լինում թողնել տունն ու փախչել։ Հէնց այդպէս էլ արեցի—գնացի քաղաքը, որ գոնէ աչքով չը տեսնէի կնոջս անտառապանութիւնը և այդ անտառապանութեան պտուղը, որ անզայտ էր ուրիշից և որը՝ ամեն օր զէմա ցցված՝ փչի նման ծակծակում էր անանց զբան էլ վիրաւոր սիրտու։ Այս ամբողջ 11 տարի է, որ ես մշակութիւն եմ անում մի անխիղճ մարդու մօտ—խղճով մարդու ես երբէք չը հանդիպեցի—և իմ արինք-բորինքով վատապակած փողերը շարունակ ուղարկում եմ գիւղ կնոջս... Իսկ կինս, տանք ինձ վրա խղճահարկելու, վատնում է իմ դարձար վատապակած օրէինքը։ Կեանք անտառապանութիւն անելով, ինձ ուղարկում միայն այս գարի հարցը...

Նա այդ միջոցում խիստ զգացված էր։ — Է՛հ, ինչ ես ասում, վարժապետ ջան, շարունակեց նա իմ հարց տալուց յետոյ,—ասա 14 տարի է, որ ես իմ ինչորոշներով ու արեւրսանքներով հոգևոր իշխանութեան եմ դիմում, էլ բան չը մնաց՝ որ չը պատմէի, էլ խօսք ու արտասուք չը մնաց՝ որ չը թափէի, բայց բոլորը—բոլորը զուր անցաւ, ես էլի պանուս եմ իմ անտառակ կնոջը, ես էլի տանջվում եմ իմ ցեղի մէջ... Օ՛ր, զգուշու՛մ կրակ է... Աստուած իմ, արեւն լամոյ թշնամուն նշ չոց չը տայ... Բայց ինչ կարող եմ անել, երևի մեղաւոր եմ...

Նա դարձեալ սկսեց լուռ կերպով արտասուել։ — Ինչպէս ընտելութիւն չեղաւ, կրկին շարունակեց նա արտասուքը սրբելով,—ընտելութիւն եղաւ. բայց ինչ օգուտ... Իմ կնոջ պոռնիկութիւնը հաստատելու համար վերջութեան էին կանչվում գիւղի երեխիւն մարդիկ, որոնք բոլորն էլ կնոջս հետ ստոր յարաբերութեան մէջ լինելով՝ ոչ միայն իրանք չէին վկայում ճշմարտութիւնը, այլ և հարաբակ վկայներն էլ համոզում, վախեցնում էին ճշմարտութիւնը խոստատելու համար։ Գիւղի մարդկանց մէջ խիղճ, ճշմարիտ քրտնոտութիւն չէ մնացել, վարժապետ ջան. էլ ով էր գծվել, որ ինձ նրան մի աղքատ մարդու համար գիւղի երեւելիներէ աչքից ընկնէր. մի չը գիտեմ՝ ասելով պրծնում էին... Իսկ ինձ սող-սող օպանում... Ես արդէն մի մեծած մարդ եմ...

Այս անգամ արտասուքի կաթիլները անելի առատ կերպով սկսեցին հոսել նրա աչքերից։

— Եթէ օրէնքը ստանց հաստատուն ապացոյցներ չի լուծի մեր պտակը, ուրեմն մինչև մահ ես տանջվելու եմ, ասաց նա խելոված ձայնով. որովհետեւ երբէք մեր անխիղճ գիւղացիք չեն տայ այդ պահանջված ապացոյցները ինձ նման մի անձար աղքատին փրկելու համար... Հապա ես ինչ անեմ, վարժապետ ջան, մի ել, մի ճար ու ճամբայ ցոյց տուր... Թէ ինձ սպանում, օրէնքին դէմ է, թէ կնոջս սպանեմ՝ աւելի վատ... բա մինչև թր տանեմ իմ կնոջ անտառապանութիւնը... չէ որ ես էլ մարդ եմ, իմ մէջ էլ մարդկային սիրտ կայ... Ես իսկ ես ինչ մեղաւոր եմ...

Նա այլ ևս չը կարողացաւ շարունակել. իսկ ես, ինձ բարոյովիս անգոր զգալով գիւղացու այն ծանր վիտի դէմ, ճնշված օրոտով ասելով վերադառնալով իսկոյն արձանագրեցի ասելով փական պատմութիւնը, որպէս զի ընթացողները վճռեն, թէ ով է մեղաւորը։

Մ. Ղազարեան

ՆՈՒՇԻՆ ԼՈՒՐԻՆԻ

Չորեքշաբթի, օգոստոսի 6-ին, Սատրախանի թեմի առաջնորդ Սեդրակեան արքեպիսկոպոստի չունեցայ, որ անտէի և տեսածս պատմէի։

Շարժական կամ տեղափոխուող նկարչութեան անհնարին նմանութիւնք իմ տեսածը Սևասուսի Արքեպիսկոպոստի վանքի պատկեր Աստուածածինն է անբաժան Յիսուս մանուկով, որուն համար կրօնի թէ գոյութիւն ունէր անելի քան 750 տարիներ առաջ և Միսիթար Աքրասօս մերսսսսուս պատկերն է։

Սա այ ընձեռանից շատ յետոյ (2—300 տարի յետոյ) որ և է համարել մը ձեռքը նկարուած իւղաների է կտակը վրա և տարեհաս ազգիտանի մի արժէք շունեխալուց զատ զեռ չէնք գիտեք թէ նկարողն էլ հայ է։

Հիմի վերջապէսով հինգերի մասին այս բոլորովին համառոտ տեղեկութիւններս, որոնց մշակելը, շտկել և լրացնելը—մասնաւոր լրացնել անպատճառ հարկ է—ընդհանուր կարծիքը աս է։ Այն 900—1000 տարեկան հայ կեանքի շրջանը, որի գեղարուեստին մասին խօսելի փորձեցի, ճշմարիտ որ զուտ գեղարուեստական բարձր հասկացողութեան տեսակէտով առանձին բան մը չարժեք. մնաց որ, դեռ ամեն բանից առաջ, մերոնք ուրոյն, տեղեկան, ազգային ուղղով ալ չեն կրցած զինչ մեր այն բնատառ ցանկան գիտութիւնով նկարութեան վրա, որը սովորել են Բիւզանդիոնում կամ Բիւզանդացիներէր։ Այդ դարաշրջանների պատմական կեանքի բնախօսութիւնն արած ժամանակն բաւական ցուցուցի նաև այն աղբիւրի պղտորութիւնը, որից ստանում էին հայեր գեղարուեստական շուրջ մեր էսթետիկական ծաբաւը յարեցնելու համար։ Ապա քիչ էլ եթէ կամիք (հայաբար կամ ազգասիրաբար խօսեալով...) այդ գարերիս շրջաններում Հայաստանը բնուած զանդուած աշխարհում էլ դժուար, ասե՛նք համարեա անհնար են գեղարուեստները մշակելը։ Ինչ ժամանակներ, ինչ սև սուգ գի դարեր, մի կողմից աշխարհէն հրաժարած

որ հասաւ Թիֆլիս և նոյն օրը շարունակեց ճանապարհը դէպի Էջմիածին։

Թիֆլիսի թեմի առաջնորդ Սուրենեան արքեպիսկոպոստը չորեքշաբթի, օգոստոսի 6-ին, ճանապարհ ընկաւ Թիֆլիսից դէպի Էջմիածին։

Թիֆլիսում տիրող շք օրերին յաջորդեց մի փոքր դուրսութիւն։ Չորեքշաբթի օր առաւօտից սկսեց փչել սուրճը քամի, որ, ցրտացրեց օդը այնքան, որ գիշերը շերտապէր ցոյց էր տալիս 130 Բէռլինի Կոջօրում ջերմաչափը իջաւ մինչև 90։

Պարզից մեզ գրում են, որ հանրածանօթ վերլիչիօս հանգիստ չէ ուղում թողնել հայերին և Ֆրանսիայում «Patrie» լրագրում նորերումս նա տպել է մի յօդուած, որի մէջ ատելութեամբ զինված հայրոջներ է թափում հայերի գլխին Հալած իւրի տեղ ընդունելով վերլիչիօսի «կարծիքները» հայերի մասին, «Patrie» լրագրի դիրքաւան խմբագիրն և իր կողմից մի խիստ յօդուած է տպել հայերի դէմ, որին պատասխանել է Միսաս Չեբրազ։

Օգոստոս ամսի 1-ին լրացաւ ինչորոշների ընդունելութեան ժամանակավընթացը Պետերբուրգի լեռնային ինստիտուտում 60 ազատ տեղերի համար ինչորոշ են տուել 850 անձինք։

Այս օգոստոս ամսի 28-ին լրտնում է առաջնաւոր գրող Լեւ Տօլստոյի ծննդեան 75-ամեակը (ծնվել է 1828 թականի օգոստոսի 26-ին)։ Նայելով Տօլստոյի Եւասայեա-Պօլեանա կարուածքից ստացված տեղեկութիւններին, ասում է «Рус. Вѣд.» լրագրից,—կարելի է յուսայ, որ մեծ գրականագէտը կը դիմաւորէ այդ թէ իր և թէ աղբորը քաղաքակիրթ աշխարհի համար նշանաւոր օրը նոյնքան առաջ և գործունէապ կերպով, ինչպէս նա եղել է վերջին ժամանակի Չորայից վերջին տարիների ընթացքում կրած երեք վտանգաւոր հիւանդութիւններին, կոմս Տօլստոյի առողջութիւնը պահպանվել է և անելի կազդուովել Այն անձինք, որոնք տեսել են նրան այս ամս, հարբողում են, որ Տօլստոյ շատ առողջ տեսք ունի. նա շատ աշխատում է, իւրաքանչիւր օր առաւօտվանից մինչև ցերեկվայ ժամի 2—3-ը։ Երբ գրելու ցանկութիւն չունի, նա ուսումնասիրում է նիւթեր իր աշխատութիւնների համար։ Այս ամսս կոմս Տօլստոյ շատ աշխատում է շէշի Մուրադը վէպի վրա, շարունակելով մի և նոյն ժամանակ ուսումնասիրել Նիկոլայ I Կայսրի թագաւորութեան ժամանակամիջոցին վերաբերեալ բազմ-թիւ

ընդունակները վանքերում փակուել և լինելու և չի լինելու պոետիկաւերից միանգամայն ձեռք վերցնել, միւս կողմից երկու արհեստներով ինչորոշ մի քարուքանդի, մի ստանալով ինչորոշ մէջ կարծեմտե խաղաղութեան մը միջոցին եթէ մի իշխան կամ հայրապետ եգեւորում էր, նա ես զնում էր կարելոյն չափ մի անտոկի, դժուարահասանելի տեղում կանգնում մի տուակել կամ նուազ ճոխ գեղեցիկ կամ տղի եկեղեցի... Մեր ժողովուրդն էլ, ընդհանրապէս վերցրած արի և դաշտի ժողովուրդը, այսինքն զենքի կամ գութանի մարդ, իր վարած կեանքի բնութիւնով այնպէս էլ չառ մտակի չէր լինում գեղարուեստական ընդունակութիւնները (եթէ որանք լինէին էլ) բարգաւաճեցնելու։ Մեզանում երկի թէ միջին դասակարգ կազմող մեր առեւտրականները չեն ունեցել բոլոր ժողովուրդի հասկացողութեամբ կեանք և նրանց զբաղումի և ուշադրութեան բոլոր բովանդակ ուժը կեդրոնացել է մեզանից անելի զարգացած ծայրագոյն արեւելի ազգերի արքեպիսկոպոստները անելի բերել և արևմտեան դրագիներու ծախելու գործում։ Մեր երկրում հայերը միջնորդ անտրակականներ են եղել միայն, Հայաստան երկրի ընկան և հում բերքերը միայն եղել են հայ տեղական առեւտրի նիւթ, ընաւ ճարտարագործութիւն, ընաւ շինուածքներ, որ արտահանուելու չափ ճոխ եղած լինի հայ առեւտրականի ձեռքում։ Ուստի և մենք երբէք վաճառականի ազգ չենք եղել այդ բանին իսկական իմաստով, ստոր համար էլ հարուստ ժողովուրդը, և ունեւորութեան հետեանք կողմ կեանքի ոչ մի բարգաւաճութիւն չենք ունեցել։ Տեսնում էք, մեր ցեղային գեղարուեստական ընդունակութիւնը դեռ չեն ժխտում, իսպառ ոչ, այլ ասում են այն, ինչ որ եղել է, դատելով մնացած բաներից։ Շնորհիւ հանգուցեալ մեծ վարդապետին, հայր Ղանդ Ալիւ շանի, Ս. Ղազարու 1500 ձեռագիրներից և

նիւթերի Գիչ ժամանակ առաջ նա վերջապէս իր մի յօդուածը «Բերրոտնէական գործունէութիւն» վերնագրով Այդ յօդուածը շուտով կը յանձնի տպագրութեան Տօլստոյի մտաւոր ոյժերը, չը նայելով նրա ծերութեան, ամենին չեն թուլանում. նրա մաքի, զգացմունքի և ասեղծագործութեան ոյժը միշտ մի և նոյնն են։ Այն անձինք, որոնք առիթ են ունեցել ծանօթանալու նրա վերջին «Հաջի Մուրադ» վէպի հետ, ասում են, որ իր գեղարուեստական ոյժով, մաքի խորութեամբ, գրուածքի վարպետութեամբ, 75-ամեայ ծերունու այդ վէպը ամենին օտար չէ համարեղ հեղինակի նախկին գրուածքներից և նրա ամենանշանաւոր գեղարուեստական «Գիւր» գործոց-ներից մէկն է։

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Օգոստոսի 1-ին, պ. Սանդախտեանի դաշիճում, օր. Կնարիկ, պ.պ. Աւետեան, Ռշտունի ներկայացրին Էրվիէի «Ճիւղաներ» պիեսը, մասնակցութեամբ տեղական սիրողների «Ճիւղաներից» յետոյ պ. Աւետեան՝ շորհունակ դերասանին յատուկ անողութեամբ կատարեց Գօգայի «Ռեյալագրի օրագիրը» մտաւորը։ Յաջորդ ներկայացնումը տեղի կունենայ օգոստոսի 8-ին, պ. Աւետեանի բնեմօրիս։

ՆՈՒՐԱՍԱՍԱՍՏԻՑ մեզ գրում են. «Ալլաքացաւի մի տեսակը—արախուսան, սարսափելի տարածված է մեր գաւառում։ Չը նայած որ անցեալ 1902 թւին Նոր-Բայազէտում բացվեց ժամանակաւոր անխաբուժարան կայսրուհի Մարիա Ալէքսանդրովնայի հոգաբարձութեան կողմից ուղարկված երկու կին բժշկուհիների դեկավորութեամբ, բայց և այնպէս այդ անտանի վարակիչ հիւանդութիւնը մինչև այժմ էլ տանջում է հարիւրաւոր մարդկանց։ Շատերը կարծելով, թէ արախուսան հասարակ աչքացաւ է, սկսում են բժշկել զանազան գաւառական դեղերով, որոնց մէջ անտանի տեղի է բռնում եգիպտացի ծաղիկը, որը փոխանակ բժշկելու, անելի խտացում է հիւանդութիւնը։ Ցաւալի է, որ վերոյիշեալ հիւանդութիւնը միայն մի քանի ամիս գործեց մեզանում, որտեղից անցաւ Նախիվանի և ապա ուրիշ գաւառներ։ Ժողովուրդը միանգամայն վախենում էր դիմել բժշկութեան, որովհետեւ լուր էր, թէ բժշկուհիները «կտրում են հիւանդի աչքերը»։ Ուստի մինչև չէին համոզվում, թէ նրանք օպերացիայով փրկում են իրանց մշակական կոյր մնալուց, չէին վստահանում հիւանդանոց մըտնել։ Տարաբաղաբար այդպիսիների թիւը, համեմատելով տանջվողների հետ, քիչ էր, թէ և այդ թիւը հասնում էր 4—5 հարիւրի։ Վերջին ժամանակներումս, ինչպէս լսում ենք, բացվելու է Նոր-Բայազէտում և գաւառիս բուժարանում ամեն տեղ իրեն պատահած հայ գրչագիրներից հաւաքել էր փոքրիկ ցանկ մը անունների այն նկարիչների, որոնք գործիչներն եղել հայ գեղարուեստին և որոնց մասին յիշատակել տուել է ինձ անմոռաց անգուցական վերապատուելին։

I Յակոբ Գևարիչ, մականունանեալ «Մանրուսուս» 1186-ին ծնուել։
II Կասանդ Գևարիչ, որ Ներսէս Լամբրոնացուց գրել տուած անեւարանն է նկարած, ծնեալ 1193-ին։

III Գրիգոր Գևարիչ, մականունանեալ «Մեծահաչակ» զգովեալ և գերիվերոյ և անհատ ի տես մերս։
Լէմպերկի հնութիւնների թանգարանում գտնուող ձեռագիր անեւարանի նկարիչն է այս վարպետը։ Մտուել 1198-ին։

IV Գրիգոր Գևարիչ, Աւետարանի նկարագրողը, ծնուել է Կարնում 1220-ին։

V Անտէ Գևարիչ, սա զարգարողն է այսօր Կան գիւղի մէջ գտնուող գրչագիր անեւարանը. ծնեալ 1283-ին։

VI Սարգիս Պիծակ, «Ընչակաւորն», որոյ բազմաթիւ հաւատոյ գրեանս նկարագրեալ է և յորոց օրինակ մի գտանի ի Ասագիւղ Կ. Պօլսոյ, ծնեալ 1320—1382 *):

VII Միքիլ Շաղաթ կոչեցեալն, ծնեալ 1420։

VIII Միքայէլ Թոխաթիցի, որ սուրբ գրքեր նկարագրողն է. ծնեալ 1606—վախճ. 1630։

IX Գարիբի Գևարիչ, որդի Մարկոսի ծաղկաւորի, ծնեալ 1695։

Վերապատուեալ հայր Ղանդը 1336 և 1420 թուականների, ինչպէս նաև 1606-ի և 1630-ի մէջ եղած ժամանակներում բաց տեղեր թողել է, ենթադրելով որ այդ ժամանակներում գործող հայ նկարիչ պէտք է, որ եղած լինեն։

Արշակ Գէթվաճեան

*) Ամեն բանից առաջ կը կասկածիմ թէ այս պատկերը իսկ որ Երիգոր Մաղիստրոսի զրկածն է։ Եթէ հակառակ իմ կասկածին ճշմարիտ որ այդ պատկերը Վ. Պօլսուս մինչև ծուծը բիւզանդականութեամբ վարակուած և լուսարևն դպրութեամբ զբաղող լինեալ հայ իշխանին ուղարկածն է, զարձեալ անյայտ բիւզանդացու մը ձեռագործն է և ոչ հայի։ Երկու անգամ Ալէքսանդրոպօլ գնալիս չաղողեցաւ ինձ մի օրինակ վերցնելու Կերչեսու ինտելիգենտ բարեկամուսով մը միջոցաւ ինչորոշի թող տալ լուսանկարել, բայց դա նկատուել է այնքան ծանր գործ, ինչպէս թէ եթէ սուրած լինէի, որ Սրագած սարը պատուով ուղարկէին ինձ առ ժամանակ մը։

լոր գիւղերի իւրաքանչիւր ընտանիքի տուած 7 կօպէկական վճարով մշտական աջաբուժարան, գաւառական բժիշկ Գ. Չաքարեանի մօտ, որը, ինչպէս յայտնի է Մշակիչ ընթերցողներին, ամբողջ 5-6 ամիս բացակայեց գաւառից, գնալով կին-բժշկուհիներին հետ Նախիջանու ծանկանանք բացող աջաբուժարանին կատարեալ աջողութիւն Ձր մոտանալը, որ Նոր-Բայազէտը դարձեալ մնում է առանց սեփական բժշկի ու ղեկավարան:

ԿԲԱՄՆՕՎՈՒՄԿԻՑ մեզ գրում են. «Ձր նա- յած, որ կառավարութիւնից հրամայված է կի- րակի և տօն օրերը փակել ըստ խանութները, բայց ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում այդ հրամանին, և բոլորն էլ առևուր են ա- նում ծածուկ Անա ինչպէս. փակելով իսկա- կան դռները, մի և նոյն ժամանակ բանում են ձիւստակաները, որպէս զի լոյս լինի ներսը, և գործակալներին մէկին գնելով մի վիտ- սաւակայի առաջ, միւսին անելիքների անջը- ժօտ, երրորդին, չորրորդին խանութում, ինչ- պէս կապված կենդանի, ոչ մի տեղ իրաւունք չունեն գնալու, ու այդ օրը գործակալաւորը աւելի պէտք է այնպէս և աւելի մեծ ճարպի- կութիւն պէտք է գործ զնն ապրանքը օտ- դացնելու համար»:

ՄԵՆՐԻ գիւղից մեզ գրում են. «Ձբաւորու- թիւնը Մեղրի գաւառի գիւղացիներին դրել է այնպիսի դրութեան մէջ, որ չը գիտեն որ կողմը փախչին հաց աղբրող երեսաների ձե- ոսից: Գարնանը մանր անասունների ընդհա- նուր կտորածը և մորեխի առած առագին զնաքը միանգամայն մեղրին գիւղացու վեր- ջին յոյզը Հագարակ, Գուրիս, Գիղեմիսս և Վառնակ հայաբնակ գիւղերը ամենից շատ զնաքովին Տարվա այս ժամանակ, երբ կա- լի, հունձի ժամանակն է, ուտելու հաց չու- են: Ակամայից մի հարց է առաջ գալիս, ինչով պէտք է կերակրվի այս թշուառ ժողո- վուրը, կամ քրտեղից պէտք է նա սերմացու գտնէ եկող տարվայ համար ցանելու. նոյն իսկ խոտ ու դարման չը կայ եզան կամ ջրոտն ուտանդուս Այս գիւղացիներին միմիայն կողմնակի օգնութիւնը կարող է ազատել կո- բօտեան ճանապարհից, հակառակ դէպքում կորած են»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԱՅԻՆՕՒՆԱՅՈՒՄ

Ն որ ապստամբութեան պատճառ- ները Երկար ամիսների ընթացքում մակե- ղօնացիները այնքան ճնշվել էին իրանց ազա- տագրական շարժումը մղելիս, այնքան զոհեր էին տուել, որ դժուար էր սպասել, թէ նոր ապստամբութիւն կարող է բռնկվել, այն ևս այդպիսի ուժեղ թափով, մեծ ծաւալով: Սա- կայն դառն իրականութիւնը եկաւ մի անգամ էլ զոյց առաւ, թէ դատարկ խոստումներով չէ կարելի ջնջել կենդի ու գոյքը ապահո- վել թիւն պահանջող ազգայնականութեանը, թէ այնքան դառն փորձեր կրած, այնքան երկար տանջված ու կեղծված ժողովուրդը չէ կարող այլ ևս համբերել:

Մակեդոնիայի բարենորոգումներ խոստա- ցան, բայց դրանք միայն թղթի վրա մնացին իրեր մեռած տուտ, իսկ թիւրք կառավարու- թիւնը անարգել շարժումների իր շարժումու- թիւնը իր պաշտօնանների, զինւորների ու մարտնչող մահմեդական ամրոյի ձեռքով կո- տորեց ու բանտարկեց մակեդոնացիներին, ա- ւերեց, թալանեց ու հրդեհեց նրանց օտա- ցուածքը:

Ան թէ այդ վերջին գազանութիւնների մասին ինչ է գրում «Вечерная Почта» լրա- գիրը. «Փրեթէ բոլորական բոլոր գիւղերում թիւրք զինւորներ են պահպանում դրված. դը- րանք իրանց հանձնարի համեմատ գործ են ա- ծում այն ամենը, ինչ որ մօտ է, ինչ որ թանգ է բոլոր գիւղացու համար Շատ գիւ- ղացիներ չէին կարող մօտենալ իրանց կա- նանց, որովհետև նրանք ծառայում էին թիւրք զինւորների գազանային կրքեղին բաւարարու- թիւն տալուն: Գործիկօզօ գիւղում բնաբար- ված է տաք տարեկան մի աղջիկ՝ Անդօսիտ Ատանասովա, որը այժմ մահամերձ հիւանդ է: Բէսօլօ գիւղում ինքը միւլադիմը—(զինւորա- կան գլխուոր)—բնաբարեց մի կնոջը:

Դրանից յետոյ առաջ բերելով բնաբարված- ների ու սպանվածների մի երկար շարք, նոյն լրագիրը շարունակում է. «Մակեդոնիայից ե- կած մարդիկ այնպիսի բաներ են պատմում,

որ օտարափոխ մարդու մազերը բիզբից են կանգնում... ա՜նա մի քանի նմուշներ. Բանալի գիւղի մի բնակիչ չէ կարողացել թիւրքերին մօտ, որը, ինչպէս յայտնի է Մշակիչ ընթեր- ցողներին, ամբողջ 5-6 ամիս բացակայեց գաւառից, գնալով կին-բժշկուհիներին հետ Նա- խիջանու ծանկանանք բացող աջաբուժարա- նին կատարեալ աջողութիւն Ձր մոտանալը, որ Նոր-Բայազէտը դարձեալ մնում է առանց սեփական բժշկի ու ղեկավարան:

Նոյն գիւղի բնակիչ Կօչէ Չալօվին մահացու տանջանքների են ենթարկել այն պատճառով, որ նա չէ կարողացել զոյց տալ, թէ որտեղ է պահված ապստամբների գէնքերը: Դժբաղդ Չալօվը մեռնում է և երբ կանայք հաւաքվում են դիակի մօտ և սկսում են լալ, թիւրք զին- ւորները յարձակվում են նրանց վրա և բոլորին էլ հէնջ նոյն տեղում բռնաբարում են»:

Եթէ աչքի առաջ ունենանք, որ նոյնաման և աւելի դժգոհ դէպքեր տեղի էին ունենում ամեն օր Մակեդոնիայի ամեն կողմերում, այն ժամանակ չը պէտք է դարձանայ, որ նորից բռնկվեց մեծ ապստամբութիւն, որ ինքնա- պաշտպանութեան ու զօգոնութեան հրդեհը այդպէս արագ տարածվեց և ոտքի կանգնեց- րեց ոչ միայն երիտասարդ մակեդոնացիներին, այլ նաև ծերերին, կանանց ու նոյն իսկ երե- խաներին:

Ապստամբութիւնը ժողովրդա- կան է. Բոլղարական կիսապաշտօնական «Вел- гарски Търговски Вѣстник»-ը յայտնում է, որ քաղաքում տեղիւթիւնների համեմատ, թիւրք կառավարութեան, նրա ստիկանների ու զինւորական պաշտօնանների արկունակող գազանութիւններն ու անասունն հալածանք- ներն էին պատճառը, որ Մակեդոնիայում յու- լիսի 20-ին յայտարարվեց ընդհանուր ժողո- վրդական ապստամբութիւն բոլոր ազգաբնա- կութեան կողմից»:

Իսկ «Дневник»-ը դրա վրա աւելացնում է. «Ապստամբութիւնը տարածվել է Բիտոլի, Բեսնի, Օլիւրի, Կերկուրի, Կիւլի, Պրեզի, Կրուշի, Կոստուրի, Լեբրի, Կալարի և ու- րիշ շատ գաւառներում... նա լաւ մտածված և օրտեսմանի կերպով կազմակերպված է: Միտումը տարածվել է ժողովրդի բոլոր խա- ւերում և իր կողմն է գրաւել երկրի ամբողջ ազգաբնակչութիւնը... դարաւոր տանջանքները ընդհանուր էին ամբողջ Մակեդոնիայի համար և դրանից առաջացած ժողովրդական ապստ- ամբութիւնը վերջին միջոցն է ապստամբեան համար, մի բարձրակ կոն է բռնակարի դէմ»:

Հիւլի փաշան ինչպէս յայտնի է ամիս- ներ առաջ թիւրք կառավարութիւնը Ռուսաս- տանի և Աստրո-Ունկարիայի առաջարկու- թեամբ մի շարք բարենորոգումներ խոստացաւ արեւախեղդ Մակեդոնիային: Այդ խոստումն իրագործելու համար գլխաւոր վարտաւուչ նշանակվեց Հիւլի փաշան: Բայց ինչպէս փա- տերը զոյց են տարի, այդ անձնաւորութիւնը երկրի մի մասում էր, մի կողմից այնու- տեղով գազանային խոտութիւններով հայածել մակեդոնացիներին, օտարափ տարածել ամեն կողմ և դրանով հաճոյանալ սուլթան Համիդին, իսկ միւս կողմից իր կիրթ բնաւորութեամբ, կեղծ քաղաքավարութեամբ և փրոնց ցեղեցա- պագրծել շրջնել եւրօպական ներկայացուցիչ- ներին:

«Հիւլի փաշան, գրում է «Нов. Вр.» թող- թակիցը, իր վարմունքով, իր սիրալիրութեամբ հրապրի է և ինտելիգենտ եւրօպացու տպաւո- րութիւն է թողնում—բառու բուն նշանակու- թեամբ նրա կետ խոսակցելուց յետոյ մարդ գալիս է այն եզրակացութեան, թէ մակեդոնա- կան բարենորոգումները ամենալաւ ձեռքբերում են գտնվում, թէ շուտով Մակեդոնիան կատա- րեալ դրախտ պիտի դառնայ: Սակայն անց- նում են շարժումներ ու ամիսներ, իսկ բարե- նորոգութեան օչ մի նշանակ չէ երևում... Հիւլի փաշան իր եւրօպական կրթութեան կու- լիաների յետում թագգրել է Մակեդոնիայի բոլոր ազգաբնակչութիւնը. բնաջինջ անյուր նպատակը»:

Դրանից յետոյ թղթակիցը մի առ մի յիշում է այդ բարենորոգիչ փայլախ ջաղագործու- թիւնները՝ նրա խոստութիւնները, հալածանք- ները, կեղծքները՝ որոնք բոլոր միասին գա- լիս են չեղելու, թէ մակեդոնական բարենորո- գումները միայն մի խաղ, մի պսպղուն ջօղ էին օրվա շարժումը: Համիդի աւերիչ քաղաքականու- թիւնը ծածկելու համար թիւրք կառավարու- թիւնը այդպիսի ջօղ գործածեց և թիւրքաց Հայաստանում Այգաղը էլ Շաքիր-փաշան էր, որ բարենորոգելու պատրուակով ճանապար- հորդեց հայկական նահանգներում, բայց փո- խարէնը արին ու աւերածութիւն թողեց իր յետիւցի:

Շաքիրի դերը այժմ Հիւլի փաշան է կա- տարում Մակեդոնիայում:

Ն որ անոր սարսափներ. Մակեդո- նացիների յամառ շարժումը իր գազաթիւնալե- տին է հասցրել թիւրքական գազանութիւնը Ռուսաց հրապարտարանի թարգման Մանդել- շտամը և աւտարիական հրապարտարա- նանց վերջին ճանապարհորդութեան ժամանակ ընկել և ցուցակագրել են այդպիսի գազանու- թիւնների 27 զանազան տեսակներ, որոնցից ամենագործածակները հետևակն է:

Թիւրք զինւորներն ու իշխանաւորները բոլորական մի որ և է գիւղ մտնելիս որոշ ջանակութեամբ գէնք են պահանջում, իսկ երբ այդ պահանջն անկատար է մնում, սկսում են տանջանքը նրանք 3-4 ժամ շարունակ մի ոտի վրա, արեւի տակ կանգնեցնում են գիւ- ղացիներին, տեղից շարժվողին ձեռնում են հրա- ցանի կրթեղով, Կրանից յետոյ ամենաազդեցիկ գիւղացիներին տանում են մի որ և է օտարայն կախում գլուխները վար, 10-15 րօպէ, մինչև որ զոհն այնքան զուրս են գալիս իրանց խորշերի, դէմքերը ծածկվում են արեւնոտ քրտինքով և նրանք ուշադրաց են լինում... Այդպէս է իրիզը: Ապստամբ երկիրը խա- դադացնելու համար նա իր ամբողջ հնարագի- րութիւնը գործադրում է միայն նորանոր օտարափներ համար, բայց այդ միջոցն էլ աւելի կառադեցնում է ժողովրդին, աւելի մե- ծացնում է ապստամբութեան հրդեհը:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Նիւ-Յօրք, յուլիսի, 25/13-ին

Ամերիկայի հայոց մէջ այժմ խուլ ետանդ մը կայ Գալիֆօսիա հաստատուելու. չը նա- յելով թէ Թրէզնօր հողերը պէտք եղածին ա- ւելի բարձրացած են, նորէն հայերը խմբովին կը գիմեն Միացեալ-Նահանգաց մէջ Թրէզնօր պէս և անկից շատ աւելի օգտաւէտ, ջրաբեր, գեղեցիկ տեսարաններ ունեցող և բարեբեր երկիրներ շատ կան, բայց հայերուս սկսելու քաղցութիւնը կը պակտի, այս երկրին մէջ ոչ չինչ չի պակտի նոր շէն մը, նոր գիւղ մը, նոր քաղաք մը, նոր գաւառ մը կամ նոր նա- հանգ մը ծաղկեցնելու, բացի կամքէ, ան ալ, որ հայոց բացակայ դրամադրուին է. մեր բնութիւնը եղած է միշտ սպասել, օր ուրիշ սկսի, յաղողեցնէ և յետոյ մենք երթնելու վայե- լելուն մտնակցիցը: Եթէ Ամերիկայի արդի հայ գաղթականութեան մէջ մի քիչ հետաւե- ութիւն և կամք լինի, անշուշտ որ 25 տարի վերջ Միացեալ-Նահանգաց արևմտեան նա- հանգներն միայն մէկ մասը նոր Եղեմ մը և նոր Հայաստան մը պիտի դառնայ հայոց ի- րենց կորուսած հայրենիքի փոխարէն, մինչև հայ տարրը քաղաքական անամառ ևս Միա- ցեալ-Նահանգաց քաղաքացի տարրերուն մէջ ոչ նուազ զօրաւոր տարր մը պիտի դառնայ, ինչպէս են այժմ գերմանացիները:

Կան XIII պապի հիւանդութիւնը ու մար Միացեալ-Նահանգաց հաւատարմութեան միջև սկիներն վշտակութիւն մը յատու բերաւ. նա- խազակէն մինչև յետին քաղաքացին ցաւակ- ցութեան կերպ մը արտայայտութիւն ջրաւ Ձր նայելով թէ այս երկիր անուանական կեր- պով բողոքական երկիր մ'է, բայց քիչ չեղան, որ բողոքական ձեղեղցիներուն մէջ մասնաւոր քարոզներ խօսուեցան պապի բարեմասնու- թիւններն դրուատելով Կան XIII-ի հիմնական բարեմասնութիւնն էր իր խաղաղաբերու- թիւնը, որոյ համար իսկ Պիզմարիէն ստացած էր «Թշխան խաղաղութեան» տիտղոսը, և իր դիւանագիտութեան ու քաղաքագիտութեան զարմանալի հանձնար, որով աջողեցաւ կատա- վարութիւններն Վատիկանի հետ միշտ հայա- պակել, լուսամիտ կաթօրկութեան (կաթօրի- կութեան նոր գարթնած ոսմկապետական ող- ւոյն) զարկ մը տալ, նոյն իսկ հակառակ կա- թօրկութեան աւանդական սկզբունքներուն:

Յիւազէլֆիայի մէջ տարրալոյծ մը (Mr. Hunter) անուամբ արծաթի ոսկիի վերածելու գիւտ մը բրած է: Այս անձ արդէն Միացեալ- Նահանգաց կառավարութեան 360 էլեւտրա- կան գիւտերու մենաշնորհներն ունէր: Իր նոր գիւտով կարող մը արծաթի հարիւրին 80-ը ոսկի կը դառնայ 30 օտուայ մէջ կամ պա- կաւ Մէկ զօլայի արծաթը 40 զօլայի ար- ժողութեամբ ոսկի կը դա շնայ: Գործողու- թեան ծախքը կըլլայ հարիւրին 17: Չուտ շահ կամ վատակ հարիւրին 585 կը հաշուի Մէկ գործարանէն արեւկան գուտ շահ հարիւրին 57,000 կը հաշուի: Գործողութիւնը բոլոր ե- լեքտրականութեամբ կըլլայ: Mr. Hunter-ի

այս գիւտին համար գործարան մը պիտի շինուի Յիւազէլֆիայի մէջ առաջիկայ սեպ- տեմբերին կէս միլիօն զօլար արծողութեամբ: Հետաքրքրական է գիտնալ, որ Նիւ-Յօրքի քաղաքի կալուածական արժէքը յուլիսի 1-ին հասաւ 4,730,000,000 զօլարի, մինչ անձնա- կան գոյքերու արժէքը հասած է 678,000,000 զօլարի: Կալուածական տուրքերէն 140,000,000 զօլար առաջիկայ տարւոյն մէջ պիտի ծախ- սուի քաղաքը աւելի լաւացնելու և զարդարե- լու: Կը կարծուի, թէ քանի մը տարիներէն Նիւ-Յօրք քաղաքը աշխարհի ամենամեծ, ա- մենահարուստ և ամենագեղեցիկ քաղաքը լինի:

Միացեալ-Նահանգաց գանձարան յուլիս 1-ի տեղեկագրէն կը տեղեկանանք, որ գանձատան մէջ կանխիկ դրամ կար 294,394,275 զօլար, զուտ ամեն պարտքերէ դուրս աւելցած ոսկի 102,000,000 զօլար: Գանձատան տարեկան ամ- րոշը եկամուտը՝ մարտի և ներքին տուրքե- րէ, եղած է 558,887,526 զօլար: Տարեկան ամ- րոշը ծախքը եղած է 506,176,590 զօլար, թողով զուտ հատոյթ 52,710,936 զօլար:

Նիւ-Յօրք քաղաքի երկրաչափը պատրաս- տած է մի ծրագիր քաղաքի քաղաքագիտա- կան պլանի հրապարակել նոր գեղարուես- տական շէնքերով շրջապատելու. այս շէնքերէ մին պիտի լինի 45 յարկանի մի շէնք 9,025,825 զօլարի արծողութեամբ. մի ուրիշ շէնք, Ար- ձանագրութեանց թանգարանը, երկաթու ձեռ- մակ մարմարի ու շինված, լինալու վրա է:

Միացեալ-Նահանգաց անտարական ձուղի վի- ճակագրութեան գրասենեակի տեղեկագրու- թեանց համեմատ արտածութիւնն ու ներա- ծութիւնը 1903-ին մէջ իրենց գազաթիւնակեղը հասած են: Ներածուած ապրանքների արժէքի ընդհանուր գումարը 1902-1903 տարւոյն մէջ առաջին անգամ լինելով հասած է 1,025,619,127 զօլար պատկառելի գումարին: Իսկ արտածութեան ապրանքների արժէքի ընդհանուր գումարը երկրորդ անգամ լինելով հասած է 1,419,991,290 զօլար աւագին գու- մարին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Գօրից գրում են «Մէլլէլէթ» լրագրին, թէ սերբիական թագաւոր Ալէքսանդրի սպա- նութիւնից յետոյ իրիզ-Կիօսի պալատական- ների մի խում անընդհատ շահագործում է սուլթանի կազմածամութիւնը՝ շարունակ նո- րանոր դաւադրութիւններ հնարելով սուլթանի կենքի դէմ: Այս պատճառով խիտ հակողու- թիւն է ասմանված պրինցիբերի, միմիարնե- րի, բարձրագոյն զինւորական և քաղաքացիա- կան պաշտօնանների և հոգևորականների վրո: Չինւորական միմիարի հրամանով իւրաքան- չիւր օր վարչական կորուստի մի քանի օ- ֆիցէրներ ուղարկվում են ծառայելու հետևակ զօրքի մէջ, իսկ նրանց պաշտօնները կատարե- լու համար նոր օֆիցէրներ են բերվում գա- ւառներին: Իրանց ջերմոտանչ աշխատու- թեան համար սուլթանի կենքը պաշա- պանելու գործում երեակայական դաւա- դրութիւններից, պալատական յիշված խում- բը, ի հարկէ, մեծ ընձանք է օտանում սուլթանից: Ամենից աւելի սուլթանին ան- հանգստութիւն է պատճառում երիտասարդ- թիւրքերի գոյծուհեութիւնը, և թէպէտ անա- գին գումարներ են դուրս եկել սուլթանի օրն- ուղից այդ գործուհեութիւնը արմատախիլ անելու համար, սակայն նա քանի գնում, այն- քան աւելի տարածվում է ամբողջ թիւրքիա- յում:

«ՄԵՍԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ԹՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՌԹԻՒՆԸ

7 օրոտտոսի ԳՈՐԾ-ԱՐՏՈՒՐ. Ձինատանի գաւառներից ստացվում են տեղեկութիւններ սկսվող ապա- տամբութեան մասին, որը կարող է բռնել ամ- րող Ձինատանը: Ծագական մամուլը ընդ- գծում է, որ սուսաթրութիւնը խիտ խոր արմատներ է գցել: Ձինատանում և Կորէյում ի զնա Ծագակայի շահերի:

ՊՍԿՈՎ: Աւստրիական կայսրի ծննդեան օրը Տօրօյիս կայսրանի մօտ, Կայսերական գնաց- ջում Բարձրագոյն ճաշին հրակիրից աւտրո- ունգարան զինւորական գործակալ իշխան Հօէէնլօէ-Փօն-Շիլիգօֆիւստ, որը ճաշին նըս- տեց թագուհի Կայսրուհու աջ կողմը: Ծա- չի ժամանակ Թագաւոր Կայսրը խմեց անա- բիական կայսրի կենցաղ—Օգտոտոսի 6-ին Նոցա Մեծութիւնները, Մեծ իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնան պալատի և զինւորական մի- նիստների ու օլիտայի ուղեկցութեամբ ժա- րմանցին Պսկով, ուր կայարանում դիմաւոր- վեցին իշխանութիւնների կողմից և աղ ու հաց լեքտրականութեամբ կըլլայ: Mr. Hunter-ի

մէջանանքի հասարակութիւններէն, Պոլսոյ գիւղատնտեսական ընկերութիւններէն և ուրիշ վարձատնտեսական գիւղերէն: Գիւղատնտեսական ընկերութիւնը մատուցեց Քաղաքը Կոյսրին շքեղ բնակարան մէջ կարողութեամբ և ստատիտական փաստեր Պոլսոյի նահանգի գիւղատնտեսութեան վերաբերմամբ ժողովրդի ոգևորված բացազանութիւններու ուղեկցութեամբ Նոյա Մեծութիւնները անցան զէպի երկուտակեան գնդի պարտք և ներկայ էին այնտեղ պրեօբրանտներու գնդի, զվարդական տարիներէն և նոյնօրէն կեանքի գրագրութեան գնդի գործառնողներն Քաղաքը Կոյսրը խնայ զօրահանդէսին մասնակցող զօրամասերի կենացը Առաջին ժամին Նոյա Մեծութիւնները ուղեորիցին Տօրոյին, ուր կայացաւ Բարձրագոյն ճաշ, որին հրաւիրված էին զօրահանդէսին մասնակցող բոլոր օֆիցերները:

ՎԱՇԻՆՏՈՆ. Պէկինի ամերիկական դեսպանը պրինց Յինց գրաւոր համաձայնութիւն ստացաւ, որ նա կը ստորագրէ առևտրական դաշնագիրը Ամերիկայի հետ, որի մէջ կայ յօդուած հոկտեմբերի 8-ից Մուզքէնը և Գաղտնայան բանալու մասին:

ՔՈՒՅԱՊԵՏՏՆԱ. Զապրեժնով (Պօրվատրալում) ժողովրդի ամբողջ պակեզ ունեւորական զօրակը, որ բարձրացրված էր երկաթուղիական շինութեան վրա թագաւորի ծննդեան առթիւ: Գործը կաւ հասաւ ժամագրմէրիսին հետ, որը կամենում էր խնայարէլ այդ քայլը ժամագրմէրը հրացաններ էին արձակում Երկու գիւղացի սպանվեցին, 7 մարդ վիրաւորված են ծանր և 20 հոգի թէթե կերպով:

ՉԱԳՐԷՐ: Զապրեժնով սեղի ունեցած անցքի առթիւ երկուտակեան այստեղ սեղի ունեցաւ ցոյց Մի քանի մարդիկ կայանաւորվեցին:

Կ. ՊՈԼՍԱ. Սալոնիկի վալին հաղորդեց տեղական հիւպատոսներին, որ 57 բառալիսներ, Քիւրքիայի եւրօպական նահանգներում նրա արամադրութեան ապկ գանձող վերջին պահանջը զօրքերը գէշեր են կանչվում:

Վիէննա. Լրագիրները հրատարակում են Սարաֆօյի նամակը, Սօֆիայից, արևելեան երկաթուղիների դերեկցիային, որի մէջ մակեդոնական յեղափոխական կոմիտէի գլխաւոր շտաբը Արքիանաթովում հաղորդում է դերեկցիային, որ այժմ վճոված է ապստամբութիւն սկսել Մակեդոնիայի և Ադրիանաթովի ջրիտանեայ աղբաւորութիւնը ազատելու համար թիւրքաց տիրապետութիւնից: Որովհետեւ, ինչպէս ասված է նամակի մէջ, այդ ժամանակ անհրաժեշտութիւնից զրոյցած ստիպված կը լինենք յանցաւոր փորձել անել երկաթուղիների վրա, այդ պատճառով մենք խնդրում ենք դերեկցիային մարտաօրէնութեան զգացմունքից չընդունել ճանապարհորդներին արեւելեան երկաթուղիների վրա, որպէս զի չը փոշմանէք անօգուտ զոհերի համար: Մէկ ուրիշ մասնաւոր հետաքրի համաձայն, Պոլսոյ դիվանը Գէրձիկով վաճառականի տան մէջ զգվեց ունը, որի ժամանակ սպանվեցին 9 մարդ:

Վիէննա. Բորայում լուրեր էին պտտում, որ Յրանց Յովսէփ կայսրը մտադիր է գործելից հետամար Այդ տեղեկութիւնը բղխում է վիէննական ֆերմաներից:

Եմբազիր ԱՎԻՍՏԱՆԻ ԲԱՎԱՌԱՐ Հրատարակիչներ ԲԱԳՈՒՂԻ ՏԻՎՐԱՆԵԱՆ ԻՍԱԶԱԿ ՄԷԼԻՐ-ԱՂԱՄԱԿԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԿՐՈՎՎԱՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՂԻ
(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փոխադրում Քիւրքիայի հաշուով)

Նրազ գնացք Քիւրքիայից—Բաթում ամեն օր զուր և գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 3 ր. (9 ժ.):

Նրազ գնացք Բաթումից—Քիւրքիա ամեն օր զուր և գալիս երեկոյեան 10 ժ. 24 ր. (11 ժ. 22 ր.), հասնում է Քիւրքիա առաւօտեան 8 ժ. 44 ր. (9 ժ. 42 ր.):

Պատասար գնացք Բաթումից զուր և գալիս երեկոյեան 9 ժ. 18 ր. (10 ժ. 16 ր.), հասնում է Քիւրքիա ցերեկվա 4 ժ. 25 ր. (5 ժ. 23 ր.), զուր և գալիս Քիւրքիայից երեկոյեան 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժամ 3 րոպէին):

Մարդասար գնացք Բաթումից զուր և գալիս ցերեկվա 1 ժ. 3 ր. (2 ժ. 1 ր.), հասնում է Քիւրքիա առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժ. 3 ր.), զուր և գալիս Քիւրքիայից առաւօտեան 6 ժ. 51 ր. (7 ժ. 49 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 6 ժ. 58 ր. (7 ժ. 56 ր.):

Պատասար գնացք Բաթումից զուր և գալիս զիւրեկվա 9 ժ. 23 ր. (10 ժ. 21 ր.), հասնում է Քիւրքիա ցերեկվա 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.),

նուր և գալիս Քիւրքիայից ցերեկվա 10 ժ. 51 ր. (11 ժ. 49 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 5 ժ. 8 ր. (6 ժ. 6 ր.):

Մարդասար գնացք Բաթումից զուր և գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.), հասնում է Քիւրքիա երեկոյեան 10 ժ. 3 ր. (11 ժ. 1 ր.), զուր և գալիս Քիւրքիայից երեկոյեան 10 ժ. 34 ր. (11 ժ. 32 ր.), հասնում է Բաթում ցերեկվա 3 ժ. 2 ր. (4 ժ.):

Պատասար գնացք զուր և գալիս Քիւրքիայից զէպի Երեւան երեկոյեան 11 ժ. 32 ր. (12 ժ. 30 ր.), հասնում է Երեւան 5 ժ. 14 ր. (6 ժ. 12 ր.), հասնում է Կարս 2 ժ. (2 ժ. 58 ր.):

Պատասար գնացք Կարսից զուր և գալիս ցերեկվա 3 ժ. 57 ր. (4 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրօպօլ երեկոյեան 7 ժ. (7 ժ. 58 ր.), Երեւանից զուր և գալիս 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), հասնում է Քիւրքիա առաւօտեան 5 ժ. 11 ր. (6 ժ. 9 րոպէին):

Հ Ր Ա Ի Է Բ

Քիւրքիայի վանքի եկեղեցու աւազ օարկաւազը, այժմ նորընծայ Արշակ Յարութիւնեանցը կիրակի, ամսին 10-ին մատուցանելու է նոյն վանքի եկեղեցում անդրանիկ ւ. պատարագը, և այս մասին յայտնելով վանքի եկեղեցու յարգելի ծխականներին և ժամաւորներին խնդրում ենք չնորհ ընելու Պատարագը սկսվելու է ժամի 10 1/2-ին: 1—3

Լոյս տեսաւ
ՅՈՎՀ. ԴՈՒՐԲԱՆԵԱՆԻ
„ԾԱՆՈԹ ՊԱՏԿԵՐՆԵՐ“
վերնագրով վիպական գրուածքը—այդ եկեղեցականներ և երէցփոխների կեանքից: Գինը 75 կօպ:

Դիմել այդ գրաւաճառներին Քիւրքիա և Բաթում. իսկ ներկայիս—Նեանեայ հասցեով: С.-Петербургъ, Лешгуковъ переул. № 4. Пушкинская Скоропечатня. 1—10

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԵՔԵԱՆ.
ԱՂԻ ԶԻՆԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
Հնդուհեղութիւն ամեն օր:
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան 5-ից մինչև 7
Վերամիջօրեայ փ. ա. № 8. 1—100

Մ Ի Փ Ր Ճ Վ Ո Ճ
Խ Մ Բ Ա Ս Կ Ե Ս,
որ կազմում է եկեղեցական ջառանգան և եռանգան (Յկմայեանի պարտաւորւթյամբ) խառն խմբեր, դասեր աւանդել երաժշտական թէօրիայից—կարող է պաշտօն ունենալ միայն հիւսիսային Կովկասի և Ռուսաստանի ներքին գաղաղներում:

Դիմել Գ. Старый-Крымъ (Таврическій) А. М. Туманянцу. 3—5

ՕՅՅԱՅՅԱՅՅ
ТРЕБУЕТСЯ учитель для преподаванія въ четырёхъ одноклассныхъ училищахъ уроковъ армянскаго языка за годовую плату 720 р. За болѣе подробными свѣдѣніями обращаться въ Свято-Крестовское городское общественное управленіе. Городъ Св. Креста, Ставропольской губ. 3—3

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Ա. Յ. ԲԱԹԱՆԵԱՆ
ամաս ընդունում է հիւանդներ Պետրիգորում:
Армянская ул., д. Паджановой. (չ. ոչ.) 20—20

Ա Տ Ա Մ Ե Ա Ր Ո Յ Ժ
ՕՐ. Ս. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ԱՆԿՆՈՒՄ ԵՄ
ՀԱՍԱՆ-ՋԱՎԱԿԱՆԻ ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ
100—105

Լոյս տեսաւ
ԲԺՇԿ. ՎԱՏ. ԱՐՃՐԱՆՈՒ
Ա Ղ Ջ Ի Կ
պատկերներով
(Առողջապահական և բարոյագիտական էտիւդ) Գինն է 60 կ.
Դիմել Քիւրքիա, ԿՊԱՆԿԵՐԵՐԸ գրախանութիւն: 4—5

Թիֆլիսի Կենտրոնական Գրախանայի Գրախանայի Գրախանայի
վաճառում են հայերէն նեանեայ նոր գրքերը:
Ալթունեան Արշ., Աղբաւորի պատիւը կամ Նախախնամութեան մատը, իրական վէպ, 4 հատոր, Գաւրիէ, գ. 2 ր. 40 կօպ:
Անդրէէվ Լ., Օտարազգին, թարգ. առ. Տ. Յովհաննիսեան, Քիւրքի. 1903 թ., գ. 10 կ:
Արարի, Քերթնական հիւանդութիւն, Քիւրքի. 1903 թ., գ. 20 կ:
Բոուր ժ Գ Օ Ղ, Մի խոստովանութիւն, վէպիկ, Քրանս. թարգմ. Ն. Յարոյ, Քիւրքի. 1903 թ., 15 կ:
Գօրկի Մ ա կ ա., 26 տղամարդ և 1 աղջիկ, թարգ. Մուշէ վարդապետ, Քիւրքի. 1903 թ. 5 կ:
Թաւաբէզեան Վ., Բանաստեղծութիւններ, Քիւրքի. 1903 թ. գ. 50 կ:
Եսայեան Յ ա Ր., Բաթիլ—նրա կեանքը և գրական գործունէութիւնը, Քիւրքի. 1903, 10 կ:
Հալալեան Ե Ր., Հորոս—ժողովրդական առակ, Քիւրքի. 1903 թ. գ. 5 կ:
Նաւասարդեան Տ Ի Գ Ր., Հայ-ժողովրդական հեքիայներ, 10-րդ գիրք, Քիւրքի. 1903, 50 կ., Բառգիրք Արարատեան բարբառի մօտ 5000 բառ ու ոճ, Քիւրքի, 1903 թ. գ. 50 կ:
Ս Օ Ղ Վ Ե Ա Ն Յ Ո Ղ Ա Կ Ի Մ, Մոռած Ծովում, վէպ երեք մասից բաղկացած, Մոսկ., 1902, 1 ր.:
Բ ա Ֆ Ֆ Ի, Ոսկի աքաղաղ, ա. և ք. մաս, ներկայիս պատկերով ք. տիպ, Բաթում, 1903, գ., 1 ր.:
Դիմել Тифлисъ, въ Центральную книжную торговлю. 1—5

Ն Է Օ Պ Օ Լ Դ Դ Ն Է Յ Շ Է Լ Լ Է Ր
առևտրական տունը բաց է անում օգոստոսի միջին թւերին երևանեան հրապարակի վրա, բաղաձային կրեդիտային ընկերութեան առն մէջ **ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱ-ԿԱՆ ՐԻՏԻՆԻ ՄԱՆՈՒԹԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՐԿՆԱԿՈՇԻԿՆԵՐԻ ՊԱՆԵՍ** և արտասահմանեան ու ուսական արտագրութեան կառուկէն ապրանքների վաճառումն:
(Օգոստոսի 2, 3, 6, 8, 10 12 և 15) 4—7

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Քիւրքիա, Կերմնաօվկայա փողոց. № 9)
Յանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտներին, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանից: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ամենօրեայ երկար կառուցական փողոց. № 9)
Կուրսերի ծրագրերը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս կուրսերի հիմնողի բնակարանում Օտարազգաբաղայինները դիմում են ԿԻՓԼԻՍԿ, учредителю коммерческих курсовъ С. П. Мануэлянцу. (ո) 7—12

Հօրախանքի „ՏԱՅԼԱՐ“ անուանված 600 դեանախին վարելանողերը և արտաստեղծողը կապարով ապու համար յունիսի 7-ին նշանակված աճուրդը և 9-ին կրկնաճուրդը չը կայանալու պատճառով, Կարսի հայոց հոգևոր կառավարութեան արեւանում նշանակված է ամսին 26-ին, առաւօտեան ժամը 12-ին նոր ԱճՈՒՐԻ և 28-ին ԿՐԿՆԱԿՈՇԻԿՆԵՐԻ նոյն հողերը կապարով ապու համար ծանկացողները պայմանների մասին կարող են դիմել ամենիս ամենայն օր:
5—8 Անդամ հոգևոր կառավարութեան Միւսա ա. քա. Տէր-Պետրոսեան

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն Ա Ք Է Ժ Ք Ա
ժողովին, գեղարվեստի և ցամաքային ազատագրութեան, ապրանքների տեղափոխութեան և գոյքերը կրօնից ազատագրելու համար:
Հիմնված է 1847 թին
Հիմնական գրամագլուխը 1,650,000 ռուբլի
Պաշտօնի գրամագլուխը 2,664,808 >
Լ. Ա Պ Ր Ա Ն Գ Ե Ն Բ Ի Տ Ե Ղ Ա Փ Ո Յ Ո Ւ Թ Ի Ն.

Աւելի քան 300 գործաղբաւորութիւններ եւրօպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին-Ասիայի, Սիբիրի և Կենտրոն Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս և ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում:
Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների և իրերի, որոնց ընդունելութիւնը և յանձնումը կատարվում է թէ ամեն և թէ պահեստներում ու խանութներում:
Յանձնումը բեռների ուղարկողներին կողմից առաջարկված պայմաններով (վերադիր ձեռքերի կաշի ուղարկողներին, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը կազմելու համար և այլն):
Պահպանութիւն բեռների արտանկող պայմաններով առաջան տեղերում՝ ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար շատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար:

II. Ն Ա Ւ Ա Գ Ն Ա Տ Ո Ւ Թ Ի Ն
Սեփական մարդասար, ապրանքատար և ձգող շաքենաւեր, ծովային և գետային նաւեր (70 նաւ):
Բեռնակիր և մարդասար նաւերի պարբերական կազմակերպութիւն Վոյառ գետի բարձր նաւահանգիստների մէջ, Բիբիսիկի մինչև Առաքալան և Կառպից ծովի բարձր նաւահանգիստների մէջ, Առաքալանից մինչև Գարսիստանի ափերը:
Ամենաընդարձակ պահեստներ Նիւնիում (սիբիրական նաւամատոյցի վրա), Առաքալանում, Բաթում և Կրմնօջորդում:
Բեռները անընդամաքս ուղարկելու համար ընկերութեան շաքենաւազնացութիւնը կամ մասնաւորութիւն է կառուցել երկաթուղիներին ևս: Այն տարածքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկողներին և ընկերութեան կողմից Գարսիստանի և Գարսիստանից Ռուսաստան, զբոյս-թիւն և ծովային նաւապարտեւորով, համալսարանային պատասխան զաշնակցութեան բարձր կէտերի մէջ:
Ապահովագրութիւնը ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բարձր գործակալութիւններին մէջ):
Բարձր ապահովագրութեամբ գործաղբաւորութիւններին, կրօնից ապահովագրելու գործերով մասնատարապէս գրաւվում են էլի ուրիշ 350 գործաղբաւորութիւններ:
Ս. Պետրեւրգի շաքենաւոր ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետրեւրգում, Ազիւրաւայի կողմից Կարսի վրա, № 10-րդ փողոցի տանը:
Ապահովագրութիւնը ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բարձր գործակալութիւններին մէջ):
Բարձր ապահովագրութեամբ գործաղբաւորութիւններին, կրօնից ապահովագրելու գործերով մասնատարապէս գրաւվում են էլի ուրիշ 350 գործաղբաւորութիւններ:
Ս. Պետրեւրգի շաքենաւոր ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետրեւրգում, Ազիւրաւայի կողմից Կարսի վրա, № 10-րդ փողոցի տանը:
Ապահովագրութիւնը ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բարձր գործակալութիւններին մէջ):
Բարձր ապահովագրութեամբ գործաղբաւորութիւններին, կրօնից ապահովագրելու գործերով մասնատարապէս գրաւվում են էլի ուրիշ 350 գործաղբաւորութիւններ:
Բիւրօնի գործակալութիւնը—Վոյառօվկայա փողոցի վրա, վրաց աշնակայանների առն Յեկեթե թիւ 108 (և ուրիշ): 116—120